


Անգողին  
Բայցուհին և պար-  
զմառվածը



4. Դայել  
1893

ԱՆԳԼԻԱՅԻ ԹԱԳՈՒՀԱԿԱՆ

ՊԱՏԳԱՄԱԿՈՐԾ

—♦♦♦♦♦♦♦♦♦♦♦♦—

معارف عمومیه نظارت جلیله سنك ١٤ تشرین ثانی ٣٠١ و  
١٩ صفر ٣٠٣ تاریخی و ٨٠٩ نومروی رخصتماه سیله  
نشر اوپنیشور

صاراف آمریقان مسیو ز شرکتی طرفندن تسویه اولنده رق  
طبع اوپنیشور

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈՂԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՑԱԿՈՐ ՊՕՅԱՃԵԱՆ

1893

891.99  
4-57



✓

1754

891.99

Գ-57

Արք ԱՆԳԼԻԱՅԻ ԹԱԳՈՒՅԻՈՅԻ ՊԱՏԳԱՄԱՒՐՈՒ



189  
39 պ

504-142

Տարիներ առաջ Անգղիոյ թագուհոյն պատգամաւորներէն մին կը ճանապարհորդէր բալխիրով Ռուսիոյ կայսեր ուղղեալ կարեւոր նամակներ տանելու համար։ Հագած էր թաւամազ մուշտակ եւ արջու մորթէ հանդերձ, եւ ծածկուած էր ուրիշ շատ մը փաթոյթներով, եւ ոտից ներքեւ զրած էր տաք աղիւսներ, վասն զի հազար կամ աւելի մղոն ճամբայ պիտի երթար սառած ձեան վրայէ։ Ճանապարհորդ պատգամաւորն արդէն անցած էր երեք քառորդը ճամբուն որ կ'իյնայ Ս. Փեթրսպուր-կի եւ Մոսկուայի մէջտեղ, եւ մինչ լուսնի լուսով կը ճամբորդէր զիշերը, բալխիրը վարող ճիշպանն յանկարծ կեցուց ձիերը։

«Բնչ կայ, ի՞նչ եղաւ,» հարցուց ճանապարհորդը։

«Բան չկայ, Տէր իմ, բայց եթէ մեռած մարդ մը ճամբուն վրայ։ եւ կառքը կեցուցի որպէս զի չըլլայ թէ անոր վրայէն

քշեմ զայն, » պատասխանեց ձիապանը :  
 « Շատ լաւ . բայց զիտե՞ս թէ մեռած է իրօք, » հարցուց ճանապարհորդը :  
 « Անշուշտ . եթէ մեռած չէ, ի՞նչպէս կ'ըլլայ որ այսպիսի զիշեր մը ճամբուն վրայ պառկած գտնուի, » ըսաւ ձիապանը .  
 « Մէկղի քաշեմ զայն եւ յառաջ վարեմ բալիսիրը : »

« Նախ ստուգենք, մեռած է թէ ոչ, » ըսաւ ճանապարհորդը բալիսիրէն իշնելով .  
 « օգնէ ինձ որ դնենք զնա բալիսիրին մէջ: »

« Ոհ, չէք զիտեր, Տէր իմ, թէ ի՞նչ տուգանք եւ պատիժ պիտի կրէք՝ զնա ներս առնլով եթէ մեռած ըլլայ, ինչպէս տարակոյս չունիմ թէ մեռած է, » առարկեց ձիապանը :

« Միթէ գաւաղանով ստիպելու եմ զքեզ, » գոչեց ճանապարհորդը, բարկանալով անոր այս կամակորութեանը վրայ .  
 « ահա անոր քայլերուն նշանները ճամբուն քովերը, ուր հոս հոն դեղեւած է իյնալէ առաջ: »

« Շատ ըմպելի խմած ըլլալու է: » մըրմընջեց ձիապանը :

« Օգնէ կ'ըսեմ, » կրկնեց միւսը :  
 Ձիապանն ակամայ հնազանդեցաւ յա-

մատ Անզգիացւոյն, եւ ըստ երեւութիւն անկենդան մարմինը կառքն առնուեցաւ :

« Քչէ հիմա ձիերդ արագ որչափ որ կրնաս, եւ կեցիր առաջին տան առջեւ որուն կը հասնիո, » ըսաւ ճանապարհորդը :  
 Եւ նստելով կարծեցեալ մեռելոյն քով գտաւ որ կատարելապէս սառած էին անոր ձեռքերը, բայց սիրտը տակաւին կը բարախէր թէեւ տկար կերպով . ուստի կը յուսար թէ մարդը կ'աղատուի մեռնելէ .  
 Եթէ շուտով դարման տարուի անոր . վասն որոյ անձկութեամբ կը նայէր չորս կողմը որպէս զի տուն մը տեսնէր ճամբուն վրայ .  
 Վերջապէս բալիսիրը կայնեցաւ փոքրիկ տան մը առջեւ : Ձիապանը դուռը զարկաւ բաւական ատեն :

« Ի՞նչ կ'ուղեք, » գոչեց ձայն մը խստութեամբ տան վերնայարկի մէկ պատուհաւնէն : Պատասխանեց ճանապարհորդը թէ ունէր հիւանդ մը կարօտ անմիջական ինսամոյ :

« Անկարելի բան է այդ, » գոչեց մարդը վերնայարկի պատուհանէն .  
 « մենք Բոլոնիացի Հրեայ ենք, եւ եթէ միոնի այդ, կամ տուգանք պիտի տանք, եւ կամ պիտի բանտարկուինք եւ մեծ վնաս կրենք :

Յառաջ վարեցէք ձեր բալխիրը . գացէք .  
ձեր հետ ըլլայ Սրբահամու Աստուածը ,  
բայց մի խնդրէք մենէ ներս առնուլ մե-  
ռած մարդը : »

« Մեռած չէ կ'ըսեմ քեզ, բարեկամ , եւ  
պիտի ապրի եւ պիտի ցուցնէ ձեղ իւր ե-  
րախտագիտութիւնը եթէ ընդունիք զնա :  
Բաց աստի , ես պիտի վճարեմ բոլոր ծախ-  
քը զոր պիտի ընէք անոր համար , նաեւ  
ինչ տուգանք որ տալ հարկ ըլլայ եթէ  
մեռնի , » զոչեց ճանապարհորդը : « Ահա  
կու տամ ձեղ ստակ այս երկու բաներուն  
համար , եւ եթէ չբաւէ , ի դարձիս կը հա-  
տուցանեմ աւելի : Նայէ , ունիմ ճանա-  
պարհորդաց պաշտօնական անցաղիր՝ որով  
պիտի համոզուիք թէ վստահելի անձ եմ ,  
եւ պիտի կատարեմ խօսքս . բաց աստի ,  
ես Անդիացի եմ : »

« Շատ լաւ ուրեմն , » ըսաւ Հրեայն  
մեղմանալով երբ ստակ խոստացուեցաւ :  
Իջաւ ունդուղէն վար եւ ձիապանը ճա-  
նապարհորդին օդնութեամբ տունը տա-  
րաւ օտարականին մարմինը : Նոր փայտ  
դիղեցին կրակին վրայ . եւ նախ անկէ քիչ  
մը հեռի՝ լաւ կերպով շփեցին բոլոր մար-  
մինը եւ տակաւ առ տակաւ բերին զայն

կրակին մօտ : Պատրաստեցին նաեւ տաք  
ըմպելի մը , եւ ճանապարհորդն սղասեց  
հոն մինչեւ որ օտարականը բացաւ աչ-  
քերը եւ ցուցուց կենդանութեան ուրիշ  
նշաններ եւս . Յետոյ ճանապարհորդը զնե-  
լով բաւական ստակ Հրէին ձեռքը , որով  
շատ ուրախ եղաւ սա , փութով հեծաւ  
բալխիրը շարունակելիւր ճամբորդութիւնը  
այն երկայն զիշերուան մէջ :

Երկու ամիս անցաւ : Թագուհւոյն պատ-  
գամաւորը կը դառնար իւր դէպի ի հիւսիս  
ճամբորդութենէն : Երբ մօտեցաւ տեղւոյն  
ուր ձիւնէն հանած էր այն օտարականը ,  
ցերեկ էր , եւ առանց դժուարութեան  
գտաւ ծեր Հրէին տունը :

« Ապրեցա՞ւ մարդը , » հարցուց ճանա-  
պարհորդն անոր :


« Այո , ապրեցաւ , եւ քանի մը անդամ  
հոս եկաւ հարցնել զձեղ որպէս զի իւր  
չնորհակալութիւնն յայտնէր , » պատաս-  
խանեց Հրեայն : Յարեց նաեւ , « Պատ-  
ուաւոր մարդ է նա , եւ Աստուծոյ մասնա-  
ւոր նախականամութեամբն էր որ աղատե-  
ցիք անոր կեանքը : Ունի կին եւ միծ ըն-  
տանիք որք պիտի մատնուէին չքաւորու-  
թեան եթէ մեռնէր : Քիէֆ քաղաքը գա-

ցած էր առնուլ մեծ գումար մը ստակ ոռյ համար դատ վարած էր, եւ չգիտալով թէ շահած էր դատը, եւ ասկէ առաջ տնանկ վիճակի մէջ բնկած ըլլալով, հետի կը դառնար տուն իւր ընտանեաց քով՝ յոդնած եւ տխուր: Երբ դարձաւ տուն, արդէն հասած էր անոր տունը նաև մակ մը որ կ'աւետէր թէ շահած էր դատը: Եթէ մեռնէր, ստացուածքը պիտի անցնէր ուրիշի ձեռք եւ անոր ընտանիքը պիտի մատնուէր աղքատութեան, այնպէս որ ունէր մեծ պատճառ երախտաղէտ ըլլալ ձեզ: »

Այս պատմութիւնը կը յիշեցունէ «մեր Փրկիչ Ս.ստուծոյն քաղցրութիւնը ու մարդասիրութիւնը» առ մարդիկ: Քանի մը նկատումներով այս պատմութիւնը գրեթէ կրկնութիւնն է պատմութեան այն վիրաւորեալ մարդուն որ կիսամեռ գտնուեցաւ Երուսաղէմի եւ Երիքովի ճամբուն մէջտեղ, զոր պատմելով Տէրն մեր հասկուց մեզ ոչ միայն թէ ո՛վ է մեր ընկերը, այլ նաև թէ ի՞նչ է Աստուծոյ սէրը որ խոր է քան մարդոց սէրն առ ընկերս. արդարեւ այնպիսի սէր «որ գիտութենէ գերազանց է: » Ապաքէն մարդուս փոքրագոյն սէրն

առ ընկերս իւր կ'օգնէ մեզ հասկնալ Աստուծոյ մեծագոյն սէրն առ մարդիկ: Տեսնել ուրիշները թշուառ՝ ի գութ կը շարժէ զմարդ: Բայց կը հարցնենք թերեւս. Կըրնայ ունենալ Աստուած այսպիսի գութ: Թերեւս սէրը զոր բարի Սամարացին իրենց ընկեր յուցուց վիրաւորեալ մարդուն՝ օրինակ բերաւ մեզ Քրիստոս որպէս զի կարող ըլլանք հասկնալ Աստուծոյ սէրը: Եւ բոլոր այսպիսի օրինակները կ'օգնեն մեզ հասկնալ թէ ի՞նչպէս խոր է եւ փափուկ Աստուծոյ գութն առ անկեալ մարդկութիւն: Տէրն մեր կը բացատրէ զայս հետեւեալ խօսքերով. «Ուստի եթէ գուք որ չար էք ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ զիտէք, որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը խնդրեն: » Մենք կրնանք հաւատալ թէ գթած է Աստուած, վասն զի կը տեսնենք մարդոց վրայ մարդասիրութեան կամ կարեկցութեան օրինակներ որ կը համապատասխանեն աստուածային մարդասիրութեան եւ կարեկցութեան, թէեւ են յանհունս ստորնագոյն քան աստուածայինը: Կը տեսնենք նաև թէ՛ բարի Սամարացոյն եւ թէ՛ վերոյիշեալ ճանապար-

հորդին պատմութեան մէջ թէ գթութիւնը  
որ սկսաւ անգամ մը՝ չգաղրեցաւ լոկ  
պանդոկ բերելով միրաւորեալը կամ հի-  
ւանը, այլ՝ ինամ տօրաւ անոր հոն, եւ  
յաջորդ օրը երբ կը մեկնէր անկէ, հոգ  
տարաւ անոր համար: Այսպէս ինամ տա-  
րած է մեզ նաեւ Քրիստոս. թողած չէ  
զմեղ անմիտար, իւր Սուրբ Հոգին զըր-  
կած է մեղ, իւր Խօսքը եւ շնորհաց մի-  
ջոցները առւած է մեզ: Այսպէս ինամ կը  
տանի Քրիստոս մեղ, եւ այսպէս կ'աւար-  
տէ իւր գործը: Եւ ի՞նչ է անոր վարձքն  
այս ամենուն փոխարէն: Անոր վարձքն է  
«շատ որդիներ վասքին մէջ մտցնելու »  
ուրախութիւնը: Մենք եւս ուրիշներուն  
հոգեւոր օրհնութեան համար աշխատելով  
մամնակից կ'ըլլանք Քրիստոսի ուրախու-  
թեան: Ուրիմն ապրինք այնպէս որ չզըր-  
կուինք այս ուրախութենէն:



2013

0015417

2001

«Ազգային գրադարան»



NL0015417

